

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Յ Վ Ե Ն Ե Տ Կ Ո Յ . - Ի Ս . Ղ Ա Ջ Ա Ր

(Շար. տես թագմ. 1926, էջ 189)

ՃԾԲ.

**Մեզգոնեան Աբրահար հետեւել նամակէն կ'անդրադարձնենք կարեւոր նորու-
թիւններ և մանրամասնութիւններ՝ վանքին եկեղեցւոյն ու մանաւանդ վենետկոյ Հայոց
Ս. Խաչի մատրան պատմութեան համար:**

**Վերապատուելի հօր մերում Գեորգ վարդապետին ողջոյն
և սեր բազում յոյժ**

... Ձդան բերք յառաջ, և զաւագ խորանն տարագ յետ իբր որմայեց. շինեցաք
բեմ բարձր հինգաստիճանեան, որմաքարեայ յատակաւ. շինեցաք ի նմա զգերեզման մե.,
ծի աբբայ հօր մերոյ ննջեցելոյ, փառաւոր ձևով, յազնիւ և ի գեղեցիկ քարանց, քան-
դակեալ ի վերայ կափարջին երկնագունի ամպասարասի՝ մեծավարկի, զտանաւորս վեր-
տառեալս քաշաներողս՝ կարդացեալս ի հելլեն բարբառ՝ էփիկոսմամայ, որոց սկզբնա-
տառքն վերուտս ի վայր հեզնէ զայս բան. ԳԵՍԲ ԲԱՂՏԲԱՐԾՍ ՍԱՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՈԳԻՈՅԻ...
Հայք վէնէտիկոս միաբանեալ, բռնութեամբ փոփոխութեանց ետուն զհովուութիւն եկե-
ղեցւոյն իւրեանց մեզ. մտաք ի նա ի վերափոխման կուսին, կարգեցի զմանն ի մերոց
քարոզիչս նոցա. ետուն քարոզս և զարմացցցին զնա տերամբ... առաջին քարոզքն էին
յազագս սիրոյ և միաբանութեան: Վասն որոյ և ինքեանք աստուածային ազդեցու-
թեամբ ի բաց թողեալ զամենայն խէթ և զդառնութիւն միաբանեցան եկին ի վանս
մեր գրեթէ ամենեքեան միախուռն բազմութեամբ՝ եպիսկոպոսօքն հանդերձ, և տեսեալ
զճայնաւոր պատարագ մատուցել փառաւորապէս ըստ դիտաւորութեան նոցա, արարին
ժողովոյն իւրեանց՝ հեզեցունց ի մէջ ընդ նոսա բազմելով խրախութիւն մեծ ի մերում
զբքատան՝ առ չբաւելոյ այլում տեղւոյ. և կան այժմ խաղաղ և միաբան... Հ. Ղա-
զարոսն զանց ի կեռլէ. և՛ս առաւել յանկեցան ժողովուրդքն, և հսուն զեկեղեցին մեզ:
Յայսմ ամի եղև ի կոստանդնուպօլիս ժանտամար անհնարին, մինչև կոտորիլ շորի մա-
սին մեծի քաղաքին... Հ. Ջաքարիայն վասն ժանտախտին բռնութեան՝ փախուցեալ էր
ընդ մերոյ ժողովրդեան ի ծայրս հրճից սեաւ ծովուն՝ ի մայիս ամսոյ մինչև ցնոյեմ-
բեր... Յովհանէս վարդապետն է գափէլան հայոց եկեղեցւոյն [վենետկոյ], այլ զի կայ
յանկողնի հիւանդոտ, վասն այնորիկ զգործ նորա կատարէ Հ. Պօղոսն...

Յամի Տեան 1752
Յունվարի 15
[վենետիկ]

Նուսատ ծառայ
Ստեփաննոս վարդապետ Աբբայհայր

ՃԾԳ.

**Մեծ շահեկանութիւն մ'ունի Հ. Իզնատիոս Խաչատուրեանի նամակը
Վիեննայի Հայութիւնը կը յաշողի իր ջանիւր հովիւ ունենալ Մխիթարեան
վարդապետ մը Ս. Ղազարու Միաբանութեան: Այս դէպքը տեղի կ'ունենայ 1752**

Թուականին, ներկայ Վիեննական Հարց Միաբանութեան Ս. Ղազարէ բաժանումէն 21 տարի առաջ՝

Սոյն թղթով՝ Հ. Իգնատիոս վարդապետ ամբողջ տեղեկութիւն մը կու տայ իր առաքելութեան առաջին քայլերու մասին առ Մենզլոնեան Արքայազար. շատ աւելի հետաքրքրական կը դառնայ այդ գործունէութեան պատմութիւնը՝ ուրիշ մէկ անտիպ նամակին հետեւեալ ծանօթութիւններով.

« Էլ եւ առ օգնութեանը արօթից ձերոց և շնորհօց տեսն ի վայելչագեղ « մատան, որ է ի կողմն մի հրապարակի սրբոյն ստեփաննոսի, յամենայն կիրաւ « կամուտ երեկոյի, և ի կիրակէի առաւօտս, և յաւուրս տօնից փառաւորապէս « կատարեմք զպաշտօնն աստուածային. և յետ առաւօտեան ժամուն զօրի ժամ քաւ « ըրող տամ, և ապա ասեմք զթիւ պատարագ: Եւ զան յեկեղեցին մեր ամենայն « հայք, և բազում գերմանացիք, և կառք կայսերն, յորժամ ի սուրբն ստեփաննոս « զայ կայսրն, առաջի մատանն մերոյ զկայ առնուն: Եւ զմայլեալ են յոյժ բազումք « յերգս և յարարողութիւնս մեր, և զոգին և առնեն մեծարանս մեզ ստուգապէս, « և ոչ վասն քաղաքագարութեան» (Հ. Իգնատիոս Վր. Խաչատուրեան առ Մենզ- զոնեան Արքայազար, յամին 1752 Ապրիլի 15 ի Վիեննա):

Գիտելի է, որ Հ. Իգնատիոս Վիեննայի մէջ ձեռք կը զարնէ առաքելութեան « ի խնդրոյ ժողովրդեան ստիպեալ », և այդ հայութիւնը ողղակի իր կողմեն մինչև անգամ Զանաղիբ կ'ըլլայ որ Մխիթարայ Ռիտոր հոն ունենայ ուրիշ մենաս- տան մը ևս: Ան այս մասին ինչպէս կը գրէ Մենզլոնեան առ Հ. Գէորգ.

« Հայք Վենացիք և մանաւանդ անտօն աղայն և խօճասար աղայն որդեգիրք « միաբանութեան մերոյ իբրև տեսին զսա [զՀայք Իգնատիոս վարդապետ], « գրեթէ բունի հրամանաւ սուրբ ժողովոյն սեպականեցին զևս իւրեանց միասնար, « մատուցեալ առ Թագուհին մեծ՝ զմուրհակ աղայանաց՝ տալ նոցա զտեղի ինչ մեծ « և բարեխառն, շինել զնա մեզ մենաստան, և զեռ չեղև պատասխանի. Թէպէտ « պնդեն ոմանք թէ խնդրն յաջող է...» (Գր. յամին 1752 Յունուար 15):

Հետաքրքրական է մեզ գիտնալ, թէ արդեօք ինքն իսկ Մխիթար, Ս. Ղազարէն զատ, այլուր ևս մենաստան կանգնելու որ և է ծրագիր մ'ունեցած կամ հազորած է: Առ այս, անտարակոյս, պէտք է պայտինիլ պատմական որոշ փաստերու, ա- ռանց որոց անգոր կը մնայ ամէն կարծիք:

Վիեննական Ռիտին «ՅՈՒՇԱՐՁԱՆ»-ը կ'ըսէ.

« 1773 Մայիս 19ին կը հասարային ի մի՝, երբ կը յիշեն երիցազոյններէն ոմանք թէ Մխիթարայ ծրագրին մէջ կար Տրիեստ վանատուն մը բանայ, և կ'որոշեն միարեւ այս միտքը իրագործել » (էջ 4):

Թէ Մխիթար Թրիեստ վանատուն բանալու ծրագիր մ'ունեցած ըլլայ, ինչպէս կը կարծէ ՅՈՒՇԱՐՁԱՆ, նախ այդպիսի ասանդութիւն մը գոյութիւն պիտի ունենար բուն իսկ Հիմնադրիս Զեռակերտին մէջ. մինչ զեռ ոչ Մխիթարայ անթիւ նամակնե- րուն, ոչ նոյն ժամանակի Մխիթարեան թղթակցութեան և ոչ Մայրավանքիս Ժա- մանակագրութեան մէջ բառ մը կայ:

Թրիեստ վանատուն բանալու, մենաստան հիմնելու մտադրութիւն մը գոյութիւն ունեցած է առաջին անգամ Մենզլոնեանի արքայութեան երկրորդ տարին, և հիմնադիր ուզած է ըլլալ ն. Պոլսեցի Հ. Գարբէլէ փոքր կոչեցեալ՝ Միաբանութենէս վարդա- պետ մը, որ եղած է իր ընթացքով անկարգ, ինքնահաւան և անհնազանդ անձ մը: Մենզլոնեան արքայազար պայպէս կը գրէ առ Հ. Վրդանէս Ասկերեան.

1. Արեւոյն Ս. Ղազարէն անշատոյ Հարց. — Հ. Ղ. 8:

« Մինչև զգարուն աստ է [Հ. Գարրիէլ փոքր], և պատճառ սպասելոյն է և զնմանութիւն Մխիթարայ արքային բերել. քանզի թուղթ առ թագուհուն առաքեաց՝ և որպէս ականատեսքն պատմեցին, տալ ինքեան զտեղի ի թուէստ, շինել անդ շիւ- և նուածս, կառուցանել զտպարանս, զկազմարանս, զղպարատունս, և առ յապայ զմե- և նաստանս զերագոյն քան զխակամտածութիւն առաքելոյն յօղափոխութիւն. և լիւ- և նել օգտակար ազգին յոյժ յոյժ. և ունի առաջին հիմնադիր մեծի իրագործութեան և իւրոյ զտէր միքայէլն, զտէր դաւիթն, զտէր ճիվան մարիայն, և զամենայն որ և միանգամ ընդ ակամբք մեզ հայեցին, ընդ որս է և կարապետ վարդապետն » (Գր. յամին 1752 Նոյեմբ. 25): Սակայն այդ շարժումները անյաղող վերջաւորութիւն մը կ'ունենան հակառակ այն տարածուած լուրերուն՝ թէ ձեռք բերուեր են ակնկալուած ներք. մինչչեւ և այն ամենայն սուտ և հնարք խորհութեան իթալիան քահանայի, և որ պատրեալ զտէր միքայէլն առեալ է զայնչափ դրամ ի ձեռաց նորս » . (զրէ Մելգոնեան առ Հ. Միքայէլ վրդ. յամին 1753, Յնվր. կամ փետր):

Հ. Գարրիէլի այս դիտաւորութիւնը անշուշտ չէր անձանօթ նախկին թրիեստեան յետոյ վիեննական (երբեմնի վենետկեան) Հայրերուն: Ուստի պատմաբանօրէն խօսելով՝ Մխիթար չէ այդ ծրագրին յացողը, այլ կրօնաւորական հոգւոյն անաստող անձ մը, և խիստ տարօրինակ է՝ օգտագործել ուզել այդպիսի անձի մը ձգտումները, արդարացնելու համար ծագում մը, հակառակ ճշմարտութեան՝ ընծայելով զայն Մխիթարայ:

Յարգոյնպատիւ և գերապայծառ սեռան Ստեփաննոսի վարդապետի և արքայծոր ողբունի խնդալ ի քրիստոս

Յաւուրս յայտոսիկ ի ինդրոյ ժողովրդեան ստիպեալ վասն լսելոյ զբանս աստուծոյ, և ի գութ շարժեալ ի վերայ նոցա իբրև ի վերայ ոչխարաց, որոց ոչ իցէ հովիւ, չոգոյ առ արհիպիսկոպոսն մայրաքաղաքիս, և խօսեցայ ընդ նմա վասն պակասութեան տեղոյ ի լսել զխոստովանութիւն, և հաղորդել, և քարոզել զբանս աստուծոյ. ասաց, բարիոք է ինդիրդ: Նշուպէս խօսեցայ և ընդ առագերիցու եկեղեցւոյ սրբոյն ստեփաննոսի վասն բանիս այտորիկ: Իսկ նոցա խորհուրդ արարեալ ետուն ինձ զմատուռ մի ի կողմն ինչ հրապարակի սրբոյն ստեփաննոսի, որ է ըստ մեծութեան եկեղեցւոյն հայոց, որ է ի վէնետիկ. գեղեցիկ և վայելուչ և պայծառ: Ունի զխորան մի փառաւոր, և գտիւրնատուն հանդերձ երգեհոնիւ, և զարդարեալ պատկերօք: Հոգան զամենայն պէտս ծառայութեան նորա ապաստուղք եկեղեցւոյն սրբոյն ստեփաննոսի: Եւ սկսա զառաջին պաշտօն և զպատարագ մատուցանել ի նմա յաւազ հինգշաբթի աւուր. իսկ գերկրորդն այսօր մատուցի թիւ, զի չունիմք այժմ զզգեստս ըստ հայոց վասն ձայնաւոր պատուրագի: Եւ ի վաղիւն տեսան օգնականութեամբ ասեմք զժամ զառաւօտեան, յետոյ զքաւրոզ, և ապա զթիւ պատարագս: Ժամասաց եմք չորս քահանայք, ես, կարապետ եպիսկոպոսն, Յովհաննէս վարդապետն և տէր մանուէլն: Եւ երկու զպիրք են սիրացու Պօղոսն և եղբայր թովմասն, իսկ ժողովուրդք են թուով իբրև քառասուն: Այժմ յոյժ ուրախ է ժողովուրդն և մխիթարեալ: Տէր հաստատուն պահեսցէ և միբարն...: Յանձն առնելով զիս և զժողովուրդս զայս ի թուրք աղօթս ձեր և ամենայն միաբանից... ող- չոյն տամ մինասայ արհիպիսկոպոսին...:

Այս ԻԳ գիր է, գոր զրեմ է ի վանս

Նուաստ ծառայ

Յամի տեանն 1752
Ապրիլի 1

Հայր Իգնատիոս վարդապետ Խաչատուրեան
ի կարգէ սուրբ հօրն Անտոնի արքայի